




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«19» ապրիլի 2017թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետի տեղակալ

 Հ. Այունց

ԳԲԽ-42/17 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի 05.04.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Խաչպար» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 05.04.2017թ. Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից «Քիմիական նյութերի» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՇՀԱՊԶԲ-15/15-2-2017-ՀՄ-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի հրավերը հաստատվել է հանձնաժողովի 2017թ. մարտի 9-ի թիվ 1 որոշմամբ:

Հրավերի թիվ 1, 2, 3, 4, 5, 6 և 7 -րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերի «Չափաբաժնի անվանումը» սյունակում Պատվիրատուի կողմից նշված գնման առարկաների անվանումները պատկանում են ֆրանսիական «Անիոս» ֆիրմայի բրենդային անվանումներ ունեցող ախտահանիչ միջոցներին, որոնք ոչ մի այլ արտադրողի նմանատիպ ու համարժեք ախտահանիչ միջոցների մոտ չեն հանդիպում, սակայն այդ բրենդային անվանումներից հետո արված է նշում՝ «...կամ համարժեք»։ «Խաչպար» ՍՊԸ-ն՝ այդ համարժեքության թույլտվությունից օգտվելով, մասնակցել է Ընթացակարգին և 21.03.2017թ. ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից թիվ 1, 2, 3, 4, 5, 6 և 7-րդ չափաբաժինների մասով, իսկ 23.03.2017թ. ներկայացրել է պահանջված հրավերով նախատեսված փաստաթղթերը և Հավելված 5-ը՝ առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագիրը։

2017թ. մարտի 30-ին «Խաչպար» ՍՊԸ-ն ստացել է Պատվիրատուի նոր ծանուցումը, որին ի պատասխան՝ 31.03.2017թ. Պատվիրատուին է փոխանցել անհրաժեշտ փաստաթղթերը, որոնց մեջ գտնվում էին ինչպես առաջարկված ախտահանիչ միջոցների կիրառման հայերեն ամբողջական հրահանգները՝ հաստատված ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով, այնպես էլ՝ ՀՀ ԱՆ մասնագիտական եզրակացությունները՝ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ախտահանիչ միջոցների համարժեքությունների վերաբերյալ։

2017թ. ապրիլի 3-ին «Խաչպար» ՍՊԸ-ն ստացել է գնահատող հանձնաժողովի 30.03.2017թ. թիվ 3 արձանագրությունը, որի համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը գնահատվել են հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին ոչ համարժեք, որի արդյունքում մերժվել է «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին։

«Խաչպար» ՍՊԸ-ն բացարձակապես համաձայն չէ գնահատող հանձնաժողովի մասնագիտական եզրակացություններում տրված անհամարժեքությունների սահմանումների հետ, որտեղ առկա են ինչպես նեղ մասնագիտական, այնպես էլ՝ տարրական թվաբանական սխալների առկայության բազմաթիվ աղաղակող փաստեր, որոնց չենք անդրադառնում, այլ միայն կանդիդատնանք առկա իրավական ակտերի անտեսման և գնումների գործընթացը կարգավորող օրենսդրության խախտումներին,

որոնց հետևանքով Պատվիրատուի մերժման որոշումը բողոքարկում ենք հետևյալ հիմնավորումներով՝

ա) Պատվիրատուն հրավերի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագրի, «Անվանում» սյունյակում կոնկրետ բրենդային անվանումներից հետո արել է նշում՝ «... կամ համարժեք», սակայն հրավերի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր սյունակում նշել է ախտահանիչ միջոցների հատկանիշները բնութագրող այնպիսի կոնկրետ տոկոսներ, կշռաչափեր, ծավալի և ազդող նյութերի այնպիսի թվեր, որոնք պատկանում են միայն ու միայն կոնկրետ այդ բրենդային անվանումներով ախտահանիչ միջոցներին, չեն հանդիպում ոչ մի այլ արտադրողի համանման և համարժեք ախտահանիչ միջոցների մոտ:

Պատվիրատուն իր այդ որոշումով հակասում է անգամ իր իսկ կողմից սահմանված համարժեքության չափորոշիչին, որն առկա է այդ նույն Հավելված 1-ի ծանոթություն թիվ 2-ում՝ «Այն չափաբաժիններում, որոնց անվանումներում և տեխնիկական բնութագրերում առկա են հղումներ ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կիրառական է «կամ համարժեք արտահայտությունը»:

բ) Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի մասնագիտական եզրակացությունները հակասում են ՀՀ ԱՆ կողմից 07.11.2016թ. տրված ԱԲ/22-8/12127-16 փորձագիտական գնահատականներին:

գ) «Խաչպար» ՍՊԸ-ն իր հայտի Հավելված թիվ 1-ում նշել է, որ իր կողմից առաջարկվող ապրանքները հանդիսանում են ՌԴ արտադրության ապրանքներ, որոնց համար պահանջվում են ԵՏՄ հավաստագրերի առկայությունը և ՀՀ ԱՆ հաստատված կիրառման մեթոդական հրահանգները, որոնք ներկայացվել են «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից, սակայն անտեսվել են Պատվիրատուի կողմից, այն դեպքում երբ Պատվիրատուի հրավերի թիվ 7-րդ չափաբաժնում պահանջված ախտահանիչ միջոցը ընդհանրապես չունի ՀՀ ԱՆ հաստատված կիրառման մեթոդական հրահանգ, ինչը հանդիսանում է ՀՀ ԱՆ 2015թ. սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանով սահմանված պահանջների խախտում:

դ) Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի գործողությունները հանգեցրել են գնման գործընթացում «Խաչպար» ՍՊԸ-ի համար չհիմնավորված խոչընդոտների

առաջացմանը և գնման գործընթացի խտրական հիմունքներով կազմակերպմանը, որի հետևանքով գնման գործընթացը տնտեսող, արդյունավետ և օգտավետ կերպով չի իրականացվել, ինչը կարող է հանգեցնել ոչ համարժեք հատուցմամբ ապրանքների ձեռքբերմանը:

Ընկերությունը, գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է՝

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՇՀԱՊՁԲ-15/15-2-2017-ՀՄ-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգը թիվ 1,2,3,4,5,6 և 7-րդ չափաբաժինների մասով, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը, այդ թվում նաև՝ պայմանագրի կնքման գործընթացը, քանի որ ընթացակարգը շարունակելու դեպքում «Խաչպար» ՍՊԸ-ն կարող է կրել վնասներ, իսկ բողոքը բավարարվելու դեպքում կարող է առաջանալ անհարկի խոչընդոտներ ընթացակարգի հետագա շարունակությունն և գնումների բողոքարկման խորհրդի որոշման իրականացումն ապահովելու համար:

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ դադարեցնել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՇՀԱՊՁԲ-15/15-2-2017-ՀՄ-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու հրավեր հայտարարելու մասին 2017թ. մարտի 9-ի թիվ 1 որոշումը՝ հրավերի թիվ 1,2,3,4,5,6 և 7-րդ չափաբաժինների մասով:

Ընկերության կողմից ներկայացված բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները հետևյալն են՝

- Պատվիրատուի հրավերի Հավելված 1-ի «Տեխնիկական բնութագիր» սյունակում նշված գնման առարկաների բնութագրերը պատկանում են միայն ու միայն այդ արտադրողի՝ «Անիոս» ֆիրմայի, կոնկրետ այդ բրենդային անվանումները ունեցող ախտահանիչ միջոցներին, չեն հանդիպում ոչ մի այլ արտադրողի համանման և

համարժեք, սակայն այլ անվանում ունեցող ախտահանիչ միջոցների մոտ (եթե Պատվիրատուին հայտնի է այլ արտադրողի այլ անվանում ունեցող որևէ այլ ախտահանիչ միջոց, որի տվյալները համապատասխանում են իրենց ներկայացրած պահանջներին, ապա խնդրում ենք ներկայացնել էտրիդին):

Նման ձևով հրավերի կազմելը և «ՇՀԱՊՁԲ-15/15-2-2017-ՀՄ-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հետագա որոշումները հանգեցրել են հետևյալ օրինախախտումներին՝

- Պատվիրատուի կողմից գնման առարկաների բնութագրերը նման ձևով կազմելը հանգեցրել է «Խաչպար» ՍՊԸ-ի համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը և մրցակցության հավասար պայմաններ չի ապահովում մասնակիցների համար, ինչը հակասում է «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 12 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջներին:

- Պատվիրատուի կողմից գնման գործընթացը կազմակերպվել է խտրական հիմունքներով, ինչը չի նպաստում պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը և նրանց միջև մրցակցության խրախուսմանը՝ հակասելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջներին:

- Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի վերոնշյալ օրինախախտումների հետևանքը կարող է հանգեցնել 12185500 /տասներկու միլիոն հարյուր ութսունհինգ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամի գերաձախսի, ինչը հակասում է «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներին՝ գնումների գործընթացը տնտեսող, արդյունավետ և օգտավետ կերպով չի իրականացվի:

«Խաչպար» ՍՊԸ-ն 13.04.2017թ. ներկայացրել է ի լրումն ԳԲԽ-42/17 բողոքի և ի պարասխան «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 11.04.2017թ. թիվ 1078 գրության և հայտնել, որ
 Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ի թիվ 1, 2, 3, 4, 5, 6, և 7-րդ չափաբաժինների «Տեխնիկական բնութագիր» սյունակում նշված գնման առարկաների բնութագրերում գրված տոկոսների, կշռաչափերի ու ծավալների կոնկրետ թվերը համապատասխանում են միայն ու միայն ֆրանսիական «Անիոս» ֆիրմայի՝ տվյալ չափաբաժինների

«Անվանում» սյունակում նշված գնման առարկաների՝ բրենդային անվանումը ունեցող ախտահանիչ միջոցների տվյալներին:

Պատվիրատուի կողմից գնման առարկաների բնութագրերը նման ձևով կազմելը հանգեցրել է «Խաչպար» ՍՊԸ-ի համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը և մրցակցության հավասար պայմաններ չի ապահովել «Խաչպար» ՍՊԸ-ի համար, ինչը հակասում է «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջներին:

Պատվիրատուն գնման գործընթացը հնարավոր մասնակիցներից մեկի՝ «Խաչպար» ՍՊԸ-ի համար, կազմակերպել է խտրական հիմունքներով, ինչը չի նպաստում պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը և նրանց միջև մրցակցության խրախուսմանը՝ հակասելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջներին:

Պատվիրատուն, Կենտրոնին ուղղված 11.04.2017թ. թիվ 1078 գրությամբ, անդրադառնալով ՀՀ առողջապահության նախարարության կողմից 07.11.2016թ. տրված թիվ ԱԲ/22-8/12127-16 փորձագիտական եզրակացությանը, ցուցաբերել է ինչպես մասնագիտական գիտելիքների անբավարարության դրսևորումներ՝ նշելով, որ այդ մասնագիտական կարծիքը ոչ մի առընչություն չունի «ՇՀԱՊՁԲ-15/15-2-2017-ՀՄ-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի հետ, այն դեպքում երբ այնտեղ առկա եզրակացություններից երկուսը վերաբերվում են Պատվիրատուի հրավերի թիվ 1-ին և 2-րդ չափաբաժիններում առկա՝ «Անիոզիմ ԴԴ1» և «Հեքսանիոս Գ+Ռ» անվանումներով ախտահանիչ միջոցներին, այնպես էլ՝ տարրական էթիկայի նորմերի խախտումներ, երբ ՀՀ ԱՆ-ին (որը հանդիսանում է պետական լիազոր մարմին), համարում է այլ բուժհաստատություն, որի «...եզրակացությունը չի կարող հիմք հանդիսանալ այլ բուժհաստատության գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամների համար...»:

Որպես վերոգրյալի ապացույց՝ Ձեզ ենք ներկայացնում Պատվիրատուի հրավերի թիվ 1 և 2-րդ չափաբաժինների մասով ԵՊԲՀ-ի գնահատող հանձնաժողովի և ՀՀ ԱՆ մասնագիտական փորձաքննության արդյունքների համեմատական աղյուսակը, որից պարզ է դառնում, որ ՀՀ ԱՆ-ի թիվ ԱԲ/22-8/12127-16 փորձագիտական եզրակացությունով սահմանված՝ ախտահանիչ միջոցների համարժեքությունը որոշելիս

թվով 5 կողմնորոշիչ չափանիշները գնահատելիս՝ Պատվիրատուի գնահատող հանձնաժողովը ընդհանրապես չի անդրադարձել թիվ 4 և 5-րդ չափանիշներին, իսկ թիվ 1, 2 և 3-րդ չափանիշներին տվել է անհամարժեքության գնահատական՝ հակասության մեջ մտնելով ՀՀ ԱՆ եզրակացության հետ:

Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի մնացած բոլոր համարժեքության բացասական գնահատականները վերաբերվում են «Անիոս» ֆիրմայի արտադրության բրենդային անվանումներով ախտահանիչ միջոցների կոնկրետ թվային մեծություններին, որոնք էլ հենց հիմք են հանդիսանում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից առաջարկված համարժեք ախտահանիչ միջոցների նկատմամբ խտրական վերաբերմունքի դրսևորումների համար:

Ընկերություն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-42/17 բողոքը քննող հանձնաժողովի 11.04.2017թ. ժամը 17:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը և պնդել է բողոքով հայտնած դիրքորոշումը:

2. Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 11.04.2017թ. թիվ 1078 գրությամբ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 05.04.2017թ. ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը՝

10.03.2017թ. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հրապարակվել է «ՇՀԱՊՁԲ-15/15-2-2017-ՀՄ-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգ: Ընթացակարգը կազմակերպվել է հիմք ընդունելով՝ «Հերացի» թիվ 1 և «Մուրացան» հիվանդանոցային համալիրների ախտահանիչ նյութերի տարեկան պահանջը, ինչպես նաև՝ տարեկան գնումների պլանում առարկայի առկայությունը՝ գնման առարկայի որակին համապատասխան հաստատված նախահաշվային գնով: Գնման առարկա է հանդիսանում հիվանդանոցային համալիրների համար անհրաժեշտ, տարբեր բժշկական ոլորտներում

օգտագործվող ախտահանիչ նյութերը (նորածնային ռեանիմացիա, վիրահատարաններ, վիրակապարաններ, մանկաբուժական պրակտիկա, բոլոր տեսակի մակերեսներ, մանիպուլյացիոն սենյակներ, հիվանդասենյակներ, բոլոր բժշկական օգնություն սպասարկող ոլորտներ, ինչպես նաև թանկարժեք «Siemens, General Eléctrik բժշկական սարքավորումների ախտահանում): Գնման առարկայի տեխնիկական բնութագրերը կազմվել են քիմիական նյութերի և դեղորայքի ձեռքբերման գծով Պատասխանատու ստորաբաժանման կողմից: Հրավերով սահմանված բնութագրերը ամբողջությամբ և հստակ նկարագրում են ձեռքբերվող ապրանքի հատկանիշները, դրանց ձեռքբերման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը:

Ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում հայտ են ներկայացրել թվով 3 մասնակից՝ «Մագտոնի» ՍՊԸ-ն, «Արմֆարմացիա» ՓԲԸ-ն և «Խաչպար» ՍՊԸ-ն: «Խաչպար» ՍՊԸ-ն 1-7-րդ չափաբաժինների համար հանդես էր եկել համարժեք առաջարկներով: «Մագտոնի» ՍՊԸ-ի և «Արմֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված ֆրանսիական «Անիոս» արտադրող ընկերության ախտահանիչ նյութերը բոլոր ցուցանիշներով համապատասխանում են հրավերով սահմանված տեխնիկական պահանջներին:

Վերոնշյալով հայտնում ենք, որ տվյալ գնման ընթացակարգի տեխնիկական պահանջներին լիարժեք բավարարել է մեկից ավելի մասնակից: ՀՀ կառավարության 2011թ. գնումների գործընթացի կազմակերպման 168-Ն որոշման 24-րդ կետի համաձայն՝ բացառությամբ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ:

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ախտահանիչ նյութերը ներկայացված են համարժեք տարբերակներով՝ «Անիոզիմ ԴԴ1 խտանյութ 1լ»-ի համարժեք՝ «Մեզաբակ խտանյութ 1լ», «Անիոսժել 85 ՆՊՍ 1լ»-ին համարժեք՝ «Դիասեպտիկ-40 գել 1լ», «Ստերանիոս 20% 500մլ»-ին համարժեք՝ «Ստերոքս» 2,7% 5լ», «Սուրֆանիոս» խտանյութ 1լ»-ին համարժեք՝ «Անիքսան խտանյութ 1լ», «Սուրֆասեյֆաբեպիում 750 մլ»-ին համարժեք՝ «Վոնսոլարցոդացրիչ 750 մլ», «Սաֆոն-Դու 1լ»-ին համարժեք՝ «Դիասոֆտ

ԲԻՈ 1լ»: Հրավիրում ենք բողոքարկման խորհրդի ուշադրությունը այն փաստին, որ Պատվիրատուի կողմից սահմանված 1-ին և 2-րդ չափաբաժիններով տարբեր անվանումներ և տեխնիկական բնութագրեր ունեցող ապրանքատեսակների համար «Խաչպար» ՍՊԸ-ն ներկայացել է նույն ապրանքատեսակով:

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքով նշվում է, որ Ընթացակարգի հրավերի 1-7-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը և անվանումները պատկանում են «Անիոս» ֆրանսիական ֆիրմայի բրենդի «կամ համարժեք» արտահայտության կիրառմամբ և որ ոչ մի այլ արտադրող չունի պահանջվող նյութերին համարժեք նյութեր:

Վերոնշյալի կապակցությամբ հայտնում ենք, որ «կամ հայմարժեք» արտահայտությունը Օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջն է: «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել ոչ մի իրավական հիմք և ապացույց այլ արտադրողների կողմից սահմանված տեխնիկական բնութագրերին համարժեք արտադրության բացակայության վերաբերյալ: Բացի այդ, բողոքից պարզ երևում է, որ «Խաչպար» ՍՊԸ-ն հստակ իմանալով գնման առարկայի տեխնիկական պահանջները և իր առաջարկվող ապրանքատեսակների անհամապատասխանությունը, ինչպես նաև հայտով ներկայացնելով հայտարարություն տեխնիկական բնութագրերի համապատասխանության մասին /Հավելված 4.1/, այնուամենայնիվ մասնակցել է անհամապատասխանող նյութերի առաջարկով իր պնդմամբ Համալսարանի կողմից խնայողություն անելու նկատառումներով, չնայած նրան, որ Պատվիրատուն նման տեսակի խնայողության կարիքը չունի: Այն պնդումը, որ պահանջվող գնման առարկան արտադրվում է միայն մեկ արտադրողի կողմից, դեռևս չի նշանակում որ նույն ապրանքատեսակների վաճառքը չի կարող իրականացվել տասնյակ մասնակիցների կողմից, իսկ «կամ համարժեք» արտահայտությունը դեռևս չի նշանակում տեխնիկական բնութագրիչների հստակ անհամապատասխանություն, այլ գնահատվում է հավասար և բարձր ցուցանիշներով: «Մագտոնի» ՍՊԸ և «Արմֆարմացիա» ՓԲ ընկերությունների կողմից ներկայցված ֆրանսիական «Անիոլ» արտադրող ընկերության ախտահանիչ նյութերը բոլոր ցուցանիշներով համապատասխանում են հրավերով սահմանված տեխնիկական պահանջներին: Վերոնշյալով հայտնում ենք, որ տվյալ գնման ընթացակարգի տեխնիկական պահանջներին լիարժեք բավարարել է մեկից ավելի մասնակից: ՀՀ Կառավարության 2011թ. Գնումների կազմակերպման 168-Ն որոշման 24-

րդ կետի համաձայն՝ բացառությամբ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ:

«Խաչպար» ՍՊ ընկերության հայտի մերժման օրենսդրական հիմքերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից, դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը:

ՀՀ Կառավարության 2011թ. Գնումների կազմակերպման 168-Ն որոշման 24-րդ կետի համաձայն՝ բացառությամբ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Գնման ընթացակարգում համարժեքությունը գնահատելիս համեմատվում են ոչ միայն գնման առարկայի ընդհանուր օգտագործման ոլորտը, այլ պարտադիր բոլոր այն բնութագրիչները, որոնք սահմանվել են հրավերով:

Նույն հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով, գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ:

Գնման առարկայի նախահաշվային գումարները սահմանվել են հաշվի առնելով գնման առարկայի տեխնիկական բնութագրերերով սահմանված որակական և քանակային ցուցանիշները: Տվյալ գնման դեպքում միլիոնավոր դրամների խնայողությունը ախտահանիչ նյութերի որակի իջեցման հաշվին համարում ենք անթույլատրելի:

«ԱՆ գրության վերաբերյալ դիրքորոշում»

«Առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավարի գրությամբ տրված համարժեքության վերաբերյալ մասնագիտական կարծիքը, ոչ մի առընչություն չունի «ՇՀԱՊՁԲ-15/15-2-2017-ՀՄ-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հետ, ներկայացված է հրավերով սահմանված ոչ բոլոր կարևոր բնութագրիչների մասով, բացի այդ ՀՀ առողջապահության նախարարության եզրակացությունը չի կարող հիմք հանդիսանալ այլ բուժ. հաստատության գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամների համար, քանի որ գնահատող հանձնաժողովի կազմը հաստատվել է Համալսարանի ռեկտորի կողմից՝ հաշվի առնելով անդամների նեղ մասնագիտական գիտելիքները գնման առարկայի ընտրության և օգտագործման ոլորտում:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2011թ. 168-Ն որոշման 125-րդ կետը, մասնակցի ներկայացված տեխնիկական բնութագրերը որակվել են, որպես հրավերով սահնամված, մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող և մասնակցի տվյալները գրությամբ ներկայացվել են ՀՀ ֆինանսների նախարարություն մասնակցին գնումների գործընթացներին իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու նպատակով:

Հաշվի առնելով ներկայացված պարզաբանումները և փաստարկները առաջարկում ենք բողոքի քննության ժամանակ նշված հանգամանքները դարձնել քննարկման առարկայի առանցք, ինչը հիմք կհանդիսանա ներկայացված բողոքի հիմքերի մերժման:

Ի լրումն 11.04.2017թ. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամի կողմից ԳԲԽ-42/17 բողոքի վերաբերյալ ներկայացված գրավոր կարծիքի հայտնում ենք, որ «ՇՀԱՊՁԲ-15/15-2-2017-ՀՄ-ԵՊԲՀ» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների տեխնիկական բնութագրերով պահանջվող բոլոր չափորոշիչները համարվում են կարևոր՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից և օգտագործման ոլորտից:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-46/17 բողոքը քննող հանձնաժողովի 11.04.2017թ. ժամը 17:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է 11.04.2017թ. թիվ 1078 գրությամբ հայտնած դիրքորոշումը:

3. ԳԲԽ-42/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-42/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՇՀԱՊՁԲ-15/15-2-2017-ՀՄ-ԵՊԲՀ» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որը հաստատվել է ընթացակարգի հանձնաժողովի 2017թ. մարտի 9-ի թիվ 1 որոշմամբ:

2. Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, սահմանվել է հետևյալ քիմիական նյութերի ձեռքբերումը՝

Չ/և	Անվանում	Տեխնիկական բնութագիր
1	Անիոզիմ ԴԴ1 խտանյութ 1 կամ համարժեք	<p>Անիոզիմ ԴԴ1 խտանյութ 1 կամ համարժեք - (էնդոսկոպների մաքրման և բժշկական նշանակության առարկաների (ԲՆԱ) ախտահանման և նախամանրէագերծումային մշակման համար)</p> <p>Բաղադրությունը-Գուանիդին, N,N-դիդեցիլ-N-մեթիլ-պոլի (օքսիէթիլ) ամոնիումիպրոպիոնատ- 6,3%, պոլիհեքսամեթիլեն բիզգուանիդին հիդրոքլորիդ (20% լուծույթիմեջ 4.8%), (ՉԱԼ-5րդ սերնդի), ինչպես նաև ֆունկցիոնալ հավելումներ, եռէնզիմային կոմպլեքս (լիպազա, ալֆա-ամիլազա, պրոտեազա), մակերևութային ակտիվ նյութեր՝ ՄԱՆ-եր:</p> <p>Փաթեթավորումը- 1 կալիթէթիլենային տարա համապատասխան չափիչ բաժակով:</p> <p>1 կ խտանյութից ստացվում է 0.5% 200 լիտր աշխատանքային լուծույթ, որը պիտանի է 7 օր, նախատեսված է բազմակի օգտագործման համար:</p> <p>Ախտահանիչ նյութի PH-6,0:</p> <p>Ախտահանիչ նյութն օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամդրական և գրամբացասական մարէների (ներառյալ՝ տուբերկուլյոզի միկոբակտերիաները), վիրուսների (ներառյալ՝ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը, A գրիպի H5N1, H1N1 տեսակները), սնկերի (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա) և այլ մանրէների նկատմամբ: Ախտահանիչ նյութը նախատեսված է բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների՝ ախտահանման, նախամանրէագերծումային և էնզիմատիկ մաքրման համար՝15րոպեի ընթացքում:</p> <p>Վտանգավորության աստիճանը - Ստամոքս ներթափանցելիս և մաշկին քսվելիս պատկանում է չափավոր վտանգավոր նյութերի 4-րդ դասին, որովայնի խոռոչ ընկնելու դեպքում՝5-րդ դասի գործնականում անվտանգ նյութերին:</p> <p>ISO 9001, ISO 14001 և CE հավաստագրերի առկայություն: << ԱՆ գրանցման հավաստագրերը և մեթոդական հրահանգը պարտադիր են:</p> <p>Ցանկալի է ախտահանիչ նյութն ունենա երաշխավորություն՝ համատեղելիության մասին համաշխարհային ճանաչում ունեցող բժշկական սարքավորումներ արտադրող ընկերություններից (օր. Օլիմպոս, Կարլ Շտորց, Պենտաքս, Ֆուչի և կամ այլն):</p>
2	Շեքսանիոս խտանյութ 1 կամ համարժեք Գ+Ռ կամ	<p>Շեքսանիոս Գ+Ռ խտանյութ 1 կամ համարժեք - (էնդոսկոպների և բժշկական նշանակության առարկաների (ԲՆԱ) ախտահանման, նախամանրէագերծումայինմշակմանմիջոց)</p> <p>Բաղադրությունը - դիդեցիլդիմեթիլամոնիումիկարբոնատ-9.75%, պոլիհեքսամեթիլենբիզգուանիդիհիդրոքլորիդ (20% լուծույթիմեջ 4.8%), ինչպես նաև գործառնական բաղադրիչներ, կոոզիայիին հիբիտորնայիակվելյալնյութեր: Ախտահանիչնյութի pH-ը 6,3 - 7,7:</p> <p>Փաթեթավորումը- 1կալիթէթիլենայինտարա՝ համապատասխանչափիչբաժակով:</p> <p>1կխտանյութիցպատրաստվումէ 0.5% 200լաշխատանքայինլուծույթ, որըպիտանիէ 14 օր, նախատեսվածբազմակիօգտագործմանհամար:</p> <p>Ախտահանիչ նյութն օժտված է հակամանրէային ակտիվությամբ</p>

		<p>գրամդրական և գրամբացասական մանրէների (ներառյալ տուբերկուլյոզի միկոբակտերիաները), վիրուսների (ներառյալարտաընդերայինհեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը), A գրիպի H5N1, H1N1տեսակները), սնկերի (այդթվում կանդիդաևդերմատոֆիտիա) ևայլմանրէներինկատմամբ:</p> <p>Ախտահանիչնյութընախատեսվածէբժշկականնշանակությանգործիքների,</p> <p>էնդոսկոպներիախտահանմաննախամանրէազերծումայինմաքրմանհամար՝ մշակմանտևողությունը՝ մինչև 15 րոպե:</p> <p>Վտանգավորությանաստիճանը</p> <p>Ստամոքսներթափանցելիսմաշկինքսվելիսպատկանումէքիչվնասակարնյութերի 4-րդդասին, որովայնիխոռոչընկնելուդեպքում՝ 5-րդդասիգործնականումանվասնյութերին:</p> <p>ISO 9001, ISO 14001, CE հավաստագրերիհոկայություն:</p> <p>«ԱՆգրանցմանհավաստագրերըևօգտագործմանմեթոդականհրահանգըպարտադիրեն:</p> <p>Ցանկալի է ախտահանիչ նյութն ունենա երաշխավորություն՝ համատեղելիության մասին համաշխարհային ճանաչում ունեցող բժշկական սարքավորումներ արտադրող ընկերություններից (օր. Օլիմպոս, Կարլ Շտորգ, Պենտաքս, Ֆուջի և կամ այլն):</p>																													
<p>3</p>	<p>Անիոսժել 85 ՆՊՍ 1լ կամ համարժեք</p>	<p>Անիոսժել 85 ՆՊՍ 1լկամհամարժեք - Մաշկայինանտիսեպտիկ, դեզինֆեկտանտ:</p> <table border="0"> <tr> <td>Բաղադրությունը</td> <td>-</td> <td>էթանոլ</td> <td>70%,</td> <td>2.5%</td> </tr> <tr> <td>իզոպրոպանոլ</td> <td></td> <td>փափկեցնող,</td> <td></td> <td>-1.74%,</td> </tr> <tr> <td>ինչպեսնախտնավեցնող,</td> <td></td> <td>հարթեցնող,</td> <td></td> <td></td> </tr> <tr> <td>պաշտպանիչհավելումներնախատեսվածծեղքերիմաշկիխնամքիհամար:</td> <td></td> <td>Այնիրենիցներկայացնումէհիպոալերգիկ, տիքստորոպիկզել (մաշկիվրավերէածվումհեղուկի՝ օժտվածբարձրթափանցելիությամբ):</td> <td></td> <td></td> </tr> <tr> <td></td> <td></td> <td>Տոքսիկչէ,</td> <td>չունիտեղայինզրգոող,</td> <td>մաշկառեզորբտիվևզերզգայունացնողազդեցություններնհոտավետբաղադրիչներ:</td> </tr> </table> <p>Ախտահանիչնյութնօժտվածէմանրէասպանազդեցությունգրամբացասականևգրամդրականմանրէների,</p> <p>(այդթվումներհիվանդանոցայինվարակներիհարուցիչների, տուբերկուլյոզիմիկոբակտերիաների), սնկերի (ներառյալԿանդիդացեղիխմորասնկեր), վիրուսների (արտաընդերայինհեպատիտներ, ՄԻԱՎ-վարակ) A գրիպի H5N1, H1N1) նկատմամբ:</p> <p>Հականանրէայիներկարացվածազդեցությունըպահպանվումէ 3 ժամվաընթացքում: Փաթեթավորումը - 1</p> <p>լծավալիպոլիէթիլենայինտարա:</p> <p>Ախտահանիչնյութի PH-5,5:</p> <p>Տարանդոզավորողպոմպովէ՝ 1 սեղմումը 1,5մլ, մեկհիգենիկմշակումը- 3մլ-30վրկ., մեկվիրարուժականմշակումը -6մլ -90վրկ. :</p> <p>Մշակումիցհետոծեղքերիլվացումիպահանջում:</p> <table border="0"> <tr> <td>1լնախատեսվածէ</td> <td>333</td> <td>հիգենիկև</td> <td>167</td> </tr> </table> <p>վիրարուժականմշակմանհամար:</p> <p>ISO 9001, ISO 14001 և CE հավաստագրերի առկայություն: «ԱՆգրանցման հավաստագրերը և մեթոդական հրահանգը պարտադիր են:</p>	Բաղադրությունը	-	էթանոլ	70%,	2.5%	իզոպրոպանոլ		փափկեցնող,		-1.74%,	ինչպեսնախտնավեցնող,		հարթեցնող,			պաշտպանիչհավելումներնախատեսվածծեղքերիմաշկիխնամքիհամար:		Այնիրենիցներկայացնումէհիպոալերգիկ, տիքստորոպիկզել (մաշկիվրավերէածվումհեղուկի՝ օժտվածբարձրթափանցելիությամբ):					Տոքսիկչէ,	չունիտեղայինզրգոող,	մաշկառեզորբտիվևզերզգայունացնողազդեցություններնհոտավետբաղադրիչներ:	1լնախատեսվածէ	333	հիգենիկև	167
Բաղադրությունը	-	էթանոլ	70%,	2.5%																											
իզոպրոպանոլ		փափկեցնող,		-1.74%,																											
ինչպեսնախտնավեցնող,		հարթեցնող,																													
պաշտպանիչհավելումներնախատեսվածծեղքերիմաշկիխնամքիհամար:		Այնիրենիցներկայացնումէհիպոալերգիկ, տիքստորոպիկզել (մաշկիվրավերէածվումհեղուկի՝ օժտվածբարձրթափանցելիությամբ):																													
		Տոքսիկչէ,	չունիտեղայինզրգոող,	մաշկառեզորբտիվևզերզգայունացնողազդեցություններնհոտավետբաղադրիչներ:																											
1լնախատեսվածէ	333	հիգենիկև	167																												

